Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/022 »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/022-1

ք. Երևան ____/_____/2021թ.

« «ՀՀ պետական եկամուտների կոմիտե» »-ը ի դեմս Էդգար Գևորգյան ի, որը գործում է « «ՀՀ պետական եկամուտների կոմիտե» »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻՉ ԳՐՈՒՊ »-ը, ի դեմս տնօրեն Արթուր Շահբազյան ի, որը գործում է « ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻՉ ԳՐՈՒՊ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա

փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2179200.00 AMD(երկու միլիոն հարյուր յոթանասունինները հազար երկու հարյուրդրամ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն։[629][1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը։

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը։

ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար։ Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով։ Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում։ [730][2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը։

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

8 31[3]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9 3][4] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո*

ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

7. **ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

8. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը [5]։

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր

համաձայնության։

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու

օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

__

13[8]

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»	**ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻՉ ԳՐՈՒՊ**
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7	**ք.Երևան, Արամի 54**
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**Հայբիզնեսբանկ ՓԲԸ**
900011013902	**Հ/h 1150019948438403**
02647057	**02813142**
Digitally signed by GEVORGYAN EDGAR 4010690054 Date: 2021.06.16 17:39:57 AMST	Digitally signed by SHAHBAZYAN ARTUR 3109690349 Date: 2021.06.16 12:25:04 AMT
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը

չհակասող դրույթներ:

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4]9 *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/_____/2021թ. կնքված
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/022 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ապրանքի			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	39131200/2	արխիվի դարակաշարեր	Արխիվի դարակաշարերի հիմնակմախքը (կարկասը) պետք է պատրաստված լինի մետաղական կոնստրուկցիայից: Դարակաշարի ընդհանուր երկարությունը պետք է լինի 2.3 մ (+ - 1սմ), որը միջնորմով պետք է բաժանված լինի հավասար 2 մասի, ամեն մասը 1.15մ: Դարակաշարի ընդհանուր բարձրությունը պետք է լինի 2 մ (+ - 1սմ) և ունենա 5 հատ դարակներ: Առաջին դարակի բարձրությունը հատակից պետք է լինի լինի 8-10սմ, իսկ դարակների միջև բարձրությունը պետք է լինի 34 սմ (+ - 1սմ): Դարակի հիմքը պետք է լինի լամինացված ՄԴՖ-ից, որի մեջտեղի հատվածը պետք է ունենա մետաղական չճկվող հենարան: Դարակաշարի ընդհանուր լայնությունը պետք է լինի 62սմ և միջնորմով բաժանված լինի 2 հավասար մասերի, ամեն մասի լայնությունը 31սմ: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները պետք է լինեն հղկված առանց անհարդությունների և փոշեներկված լինեն հակակոռոզիոն ներկով: Ներկի

			և ՄԴՖ-ի գույնը պետք լինի մոխրագույն: Դարակաշարի և դրակաշարի տեղադրման գծագրերը կցվում են (տես նկար 1): Մատակարարված ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումն ու տեղադրումը իրականացնում է Մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: Դարակաշարերի համար նախատեսված սենյակները տեսնելու համար մասնակիցը կարող է մոտենալ Խորենացի 3 հասցեում գտնվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենք: Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքի ընդունման օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր: Կցված է f98fba52.rar
3	39131200/4	արխիվի դարակաշարեր	Արխիվի դարակաշարերի հիմնակմախքը (կարկասը) պետք է պատրաստված լինի մետաղական կոնստրուկցիայից: Դարակաշարի ընդհանուր երկարությունը պետք է լինի 5մ (+ - 1սմ), որը միջնորմներով պետք է բաժանված լինի հավասար 8 մասի: Դարակաշարի ընդհանուր բարձրությունը պետք է լինի 2 մ (+ - 1սմ) և ունենա 3 հատ դարակներ: Առաջին դարակի բարձրությունը հատակից պետք է լինի 8-10սմ: Դարակների միջև բարձրությունը պետք է լինի 60սմ (+ - 1սմ): Դարակի հիմքը պետք է լինի լամինացված ՄԴՖ-ից, որի մեջտեղի հատվածը պետք է ունենա մետաղական չճկվող հենարան: Դարակաշարի ընդհանուր լայնությունը պետք է լինի 62սմ (+ - 1սմ): Բոլոր մետաղական կոնստրուկցիաները պետք է լինեն հղկված առանց անհարդությունների և փոշեներկված լինեն հակակոռոզիոն ներկով: Ներկի և ՄԴՖ-ի գույնը պետք լինի մոխրագույն: Դարակաշարի և դրակաշարի տեղադրման գծագրերը կցվում են (տես նկար 2): Մատակարարված ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումն ու տեղադրումը իրականացնում է Մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: Դարակաշարերի համար նախատեսված սենյակները տեսնելու համար մասնակիցը կարող է մոտենալ

			Խորենացի 3 հասցեում գտնվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենք: Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքի ընդունման օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր: Կցված է 4a2326ca.rar
4	39131200/5	արխիվի դարակաշարեր	Արխիվի դարակաշարերի հիմնակմախքը (կարկասը) պետք է պատրաստված լինի մետաղական կոնստրուկցիայից: Դարակաշարի ընդհանուր երկարությունը պետք է լինի 4.66 մ, որը միջնորմներով պետք է բաժանված լինի հավասար 6 մասի 60 սմ և 1 հատ 80 սմ: Դարակաշարի ընդհանուր բարձրությունը պետք է լինի 2 մ և ունենա 3 հատ դարակներ: Առաջին դարակի բարձրությունը հատակից պետք է լինի 8-10սմ: Դարակների միջև բարձրությունը պետք է լինի 60սմ (+ - 1սմ): Դարակի հիմքը պետք է լինի լամինացված ՄԴՖ-ից, որի մեջտեղի հատվածը պետք է ունենա մետաղական չճկվող հենարան: Դարակաշարի ընդհանուր լայնությունը պետք է լինի 62սմ: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները պետք է լինեն հղկված առանց անհարդությունների և փոշեներկված լինեն հակակոռոզիոն ներկով: Ներկի և ՄԴՖ-ի գույնը պետք լինի մոխրագույն: Դարակաշարի և դրակաշարի տեղադրման գծագրերը կցվում են (տես նկար 2): Մատակարարված ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումն ու տեղադրումը իրականացնում է Մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: Դարակաշարերի համար նախատեսված սենյակները տեսնելու համար մասնակիցը կարող է մոտենալ Խորենացի 3 հասցեում գտնվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենք: Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքի ընդունման օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր: Կցված է c2caff38.rar
5	39131200/6	արխիվի դարակաշարեր	Արխիվի դարակաշարերի հիմնակմախքը (կարկասը) պետք է պատրաստված լինի մետաղական կոնստրուկցիայից: Դարակաշարի ընդհանուր երկարությունը պետք է լինի 3.4 մ, որը միջնորմներով պետք է

			բաժանված լինի հավասար 4 մասի 60 սմ և 1 հատ 80 սմ: Դարակաշարի ընդհանուր բարձրությունը պետք է լինի 2 մ և ունենա 3 դարակ: Առաջին դարակի բարձրությունը հատակից պետք է լինի 8-10սմ: Դարակների միջև բարձրությունը 60սմ (+ - 1սմ): Դարակի հիմքը պետք է լինի լամինացված ՄԴՖ-ից, որի մեջտեղի հատվածը պետք է ունենա մետաղական չճկվող հենարան: Դարակաշարի ընդհանուր լայնությունը պետք է լինի 62սմ: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները պետք է լինեն հղկված առանց անհարդությունների և փոշեներկված լինեն հակակոռոզիոն ներկով: Ներկի և ՄԴՖ-ի գույնը պետք լինի մոխրագույն: Դարակաշարի և դրակաշարի տեղադրման գծագրերը կցվում են (տես նկար 2): Մատակարարված ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումն ու տեղադրումը իրականացնում է Մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: Դարակաշարերի համար նախատեսված սենյակները տեսնելու համար մասնակիցը կարող է մոտենալ Խորենացի 3 հասցեում գտնվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենք: Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքի ընդունման օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր: Կցված է 558659b3.rar
6	39131200/7	արխիվի դարակաշարեր	Արխիվի դարակաշարերի հիմնակմախքը (կարկասը) պետք է պատրաստված լինի մետաղական կոնստրուկցիայից: Դարակաշարի ընդհանուր երկարությունը պետք է լինի 5մ (+ - 1սմ), որը միջնորմով պետք է բաժանված լինի հավասար 2 մասի, ամեն մասը 2.5 մ: Դարակաշարի ընդհանուր բարձրությունը պետք է լինի 2 մ (+ - 1սմ) և ունենա 5 հատ դարակներ: Առաջին դարակի բարձրությունը հատակից պետք է լինի 8-10սմ: Դարակների միջև բարձրությունը պետք է լինի 34սմ (+ - 1սմ): Դարակի հիմքը պետք է լինի լամինացված ՄԴՖ-ից, որի մեջտեղի հատվածը պետք է ունենա մետաղական չճկվող հենարան: Դարակաշարի ընդհանուր լայնությունը պետք է լինի 31սմ: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները

			պետք է լինեն հղկված առանց անհարդությունների և փոշեներկված լինեն հակակոռոզիոն ներկով: Ներկի և ՄԴՖ-ի գույնը պետք լինի մոխրագույն: Դարակաշարի և դրակաշարի տեղադրման գծագրերը կցվում են (տես նկար 3): Մատակարարված ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումն ու տեղադրումը իրականացնում է Մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: Դարակաշարերի համար նախատեսված սենյակները տեսնելու համար մասնակիցը կարող է մոտենալ Խորենացի 3 հասցեում գտնվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենք: Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքի ընդունման օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր: Կցված է d9648877.rar

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011013902
02647057
Էդգար Գևորգյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by GEVORGYAN EDGAR 4010690054
Date: 2021.06.16 17:50:13 AMST

ՎԱՃԱՌՈՂ
ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻՉ ԳՐՈՒՊ
Հասցե՝ ք.Երևան, Արամի 54
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ 1150019948438403
02813142
Արթուր Շահբազյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by SHAHBAZYAN ARTUR 3109690349
Date: 2021.06.16 12:25:44 AMT

Հավելված N 2
____/_____/2021թ. կնքված
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/022 ծածկագրով պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	հատ	179000.00	537000.00	3	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3,7	3	Ապրանքի մատակարարումը հավաքումը և տեղադրումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում
3	հատ	298200.00	298200.00	1	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3,7	1	Ապրանքի մատակարարումը հավաքումը և տեղադրումը

							իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում
4	հատ	279000.00	837000.00	3	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3,7	3	Ապրանքի մատակարարումը հավաքումը և տեղադրումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում
5	հատ	228000.00	228000.00	1	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3,7	1	Ապրանքի մատակարարումը հավաքումը և տեղադրումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում
6	հատ	279000.00	279000.00	1	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3,7	1	Ապրանքի մատակարարումը հավաքումը և

							տեղադրումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011013902
02647057
Էդգար Գևորգյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by GEVORGYAN EDGAR 4010690054
Date: 2021.06.16 17:50:36 AMST

ՎԱՃԱՌՈՂ
ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻՉ ԳՐՈՒՊ
Հասցե՝ ք.Երևան, Արամի 54
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ 1150019948438403
02813142
Արթուր Շահբազյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by SHAHBAZYAN ARTUR 3109690349
Date: 2021.06.16 12:26:08 AMT

Հավելված N 3
____/_____/2021թ. կնքված
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/022 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
1	39131200/2	արխիվի դարակաշարեր							537000.00	537000.00	537000.00	537000.00	537000.00	537000.00	537000.00
3	39131200/4	արխիվի դարակաշարեր							298200.00	298200.00	298200.00	298200.00	298200.00	298200.00	298200.00
4	39131200/5	արխիվի դարակաշարեր							837000.00	837000.00	837000.00	837000.00	837000.00	837000.00	837000.00
5	39131200/6	արխիվի դարակաշարեր							228000.00	228000.00	228000.00	228000.00	228000.00	228000.00	228000.00
6	39131200/7	արխիվի դար							27900	27900	27900	27900	27900	27900	27900

		ակաշարեր							0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011013902
02647057
Էդգար Գևորգյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by GEVORGYAN EDGAR 4010690054
Date: 2021.06.16 17:50:56 AMST

ՎԱՃԱՌՈՂ
ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻՉ ԳՐՈՒՊ
Հասցե՝ ք.Երևան, Արամի 54
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ 1150019948438403
02813142
Արթուր Շահբազյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by SHAHBAZYAN ARTUR 3109690349
Date: 2021.06.16 12:26:27 AMT

Հավելված N 4
____/_____/2021թ. կնքված
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/022 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/022-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	արխի	Արխիվի դարակաշարերի						

	վի դարակաշարեր	հիմնակմախքը (կարկասը) պետք է պատրաստված լինի մետաղական կոնստրուկցիայից: Դարակաշարի ընդհանուր երկարությունը պետք է լինի 2.3 մ (+ - 1սմ), որը միջնորմով պետք է բաժանված լինի հավասար 2 մասի, ամեն մասը 1.15մ: Դարակաշարի ընդհանուր բարձրությունը պետք է լինի 2 մ (+ - 1սմ) և ունենա 5 հատ դարակներ: Առաջին դարակի բարձրությունը հատակից պետք է լինի լինի 8-10սմ, իսկ դարակների միջև բարձրությունը պետք է լինի 34 սմ (+ - 1սմ): Դարակի հիմքը պետք է լինի լամինացված ՄԴՖ-ից, որի մեջտեղի հատվածը պետք է ունենա մետաղական չճկվող հենարան: Դարակաշարի ընդհանուր լայնությունը պետք է լինի 62սմ և միջնորմով բաժանված լինի 2 հավասար մասերի, ամեն մասի լայնությունը 31սմ: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները պետք է լինեն հղկված առանց անհարդությունների և փոշեներկված լինեն հակակոռոզիոն ներկով: Ներկի և ՄԴՖ-ի գույնը պետք լինի մոխրագույն: Դարակաշարի և դրակաշարի տեղադրման գծագրերը կցվում են (տես նկար 1): Մատակարարված ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումն ու տեղադրումը իրականացնում է Մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: Դարակաշարերի համար նախատեսված սենյակները տեսնելու համար մասնակիցը կարող է մոտենալ Խորենացի 3						

		հասցեում գտնվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենք: Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքի ընդունման օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր:(Կցված է f98fba52.rar)						
3	արխիվի դարակաշարեր	Արխիվի դարակաշարերի հիմնակմախքը (կարկասը) պետք է պատրաստված լինի մետաղական կոնստրուկցիայից: Դարակաշարի ընդհանուր երկարությունը պետք է լինի 5մ (+ - 1սմ), որը միջնորմներով պետք է բաժանված լինի հավասար 8 մասի: Դարակաշարի ընդհանուր բարձրությունը պետք է լինի 2 մ (+ - 1սմ) և ունենա 3 հատ դարակներ: Առաջին դարակի բարձրությունը հատակից պետք է լինի 8-10սմ: Դարակների միջև բարձրությունը պետք է լինի 60սմ (+ - 1սմ): Դարակի հիմքը պետք է լինի լամինացված ՄԴՖ-ից, որի մեջտեղի հատվածը պետք է ունենա մետաղական չճկվող հենարան: Դարակաշարի ընդհանուր լայնությունը պետք է լինի 62սմ (+ - 1սմ): Բոլոր մետաղական կոնստրուկցիաները պետք է լինեն հղկված առանց անհարդությունների և փոշեներկված լինեն հակակոռոզիոն ներկով: Ներկի և ՄԴՖ-ի գույնը պետք լինի մոխրագույն: Դարակաշարի և դրակաշարի տեղադրման գծագրերը կցվում են (տես նկար 2): Մատակարարված ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:						

		Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումն ու տեղադրումը իրականացնում է Մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: Դարակաշարերի համար նախատեսված սենյակները տեսնելու համար մասնակիցը կարող է մոտենալ Խորենացի 3 հասցեում գտնվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենք: Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքի ընդունման օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր:(Կցված է 4a2326ca.rar)						
4	արխիվի դարակաշարեր	Արխիվի դարակաշարերի հիմնակմախքը (կարկասը) պետք է պատրաստված լինի մետաղական կոնստրուկցիայից: Դարակաշարի ընդհանուր երկարությունը պետք է լինի 4.66 մ, որը միջնորմներով պետք է բաժանված լինի հավասար 6 մասի 60 սմ և 1 հատ 80 սմ: Դարակաշարի ընդհանուր բարձրությունը պետք է լինի 2 մ և ունենա 3 հատ դարակներ: Առաջին դարակի բարձրությունը հատակից պետք է լինի 8-10սմ: Դարակների միջև բարձրությունը պետք է լինի 60սմ (+ - 1սմ): Դարակի հիմքը պետք է լինի լամինացված ՄԴՖ-ից, որի մեջտեղի հատվածը պետք է ունենա մետաղական չճկվող հենարան: Դարակաշարի ընդհանուր լայնությունը պետք է լինի 62սմ: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները պետք է լինեն հղկված առանց անհարդությունների և փոշեներկված լինեն հակակոռոզիոն ներկով: Ներկի և						

		ՄԴՖ-ի գույնը պետք լինի մոխրագույն: Դարակաշարի և դրակաշարի տեղադրման գծագրերը կցվում են (տես նկար 2): Մատակարարված ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումն ու տեղադրումը իրականացնում է Մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: Դարակաշարերի համար նախատեսված սենյակները տեսնելու համար մասնակիցը կարող է մոտենալ Խորենացի 3 հասցեում գտնվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենք: Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքի ընդունման օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր:(Կցված է c2caff38.rar)						
5	արխիվի դարակաշարեր	Արխիվի դարակաշարերի հիմնակմախքը (կարկասը) պետք է պատրաստված լինի մետաղական կոնստրուկցիայից: Դարակաշարի ընդհանուր երկարությունը պետք է լինի 3.4 մ, որը միջնորմներով պետք է բաժանված լինի հավասար 4 մասի 60 սմ և 1 հատ 80 սմ: Դարակաշարի ընդհանուր բարձրությունը պետք է լինի 2 մ և ունենա 3 դարակ: Առաջին դարակի բարձրությունը հատակից պետք է լինի 8-10սմ: Դարակների միջև բարձրությունը 60սմ (+ - 1սմ): Դարակի հիմքը պետք է լինի լամինացված ՄԴՖ-ից, որի մեջտեղի հատվածը պետք է ունենա մետաղական չճկվող հենարան: Դարակաշարի ընդհանուր						

		լայնությունը պետք է լինի 62սմ: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները պետք է լինեն հղկված առանց անհարդությունների և փոշեներկված լինեն հակակոռոզիոն ներկով: Ներկի և ՄԴՖ-ի գույնը պետք լինի մոխրագույն: Դարակաշարի և դրակաշարի տեղադրման գծագրերը կցվում են (տես նկար 2): Մատակարարված ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումն ու տեղադրումը իրականացնում է Մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: Դարակաշարերի համար նախատեսված սենյակները տեսնելու համար մասնակիցը կարող է մոտենալ Խորենացի 3 հասցեում գտնվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենք: Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքի ընդունման օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր:(Կցված է 558659b3.rar)						
6	արխիվի դարակաշարեր	Արխիվի դարակաշարերի հիմնակմախքը (կարկասը) պետք է պատրաստված լինի մետաղական կոնստրուկցիայից: Դարակաշարի ընդհանուր երկարությունը պետք է լինի 5մ (+ - 1սմ), որը միջնորմով պետք է բաժանված լինի հավասար 2 մասի, ամեն մասը 2.5 մ: Դարակաշարի ընդհանուր բարձրությունը պետք է լինի 2 մ (+ - 1սմ) և ունենա 5 հատ դարակներ: Առաջին դարակի բարձրությունը						

		հատակից պետք է լինի 8-10սմ: Դարակների միջև բարձրությունը պետք է լինի 34սմ (+ - 1սմ): Դարակի հիմքը պետք է լինի լամինացված ՄԴՖ-ից, որի մեջտեղի հատվածը պետք է ունենա մետաղական չճկվող հենարան: Դարակաշարի ընդհանուր լայնությունը պետք է լինի 31սմ: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները պետք է լինեն հղկված առանց անհարդությունների և փոշեներկված լինեն հակակոռոզիոն ներկով: Ներկի և ՄԴՖ-ի գույնը պետք լինի մոխրագույն: Դարակաշարի և դրակաշարի տեղադրման գծագրերը կցվում են (տես նկար 3): Մատակարարված ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումն ու տեղադրումը իրականացնում է Մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: Դարակաշարերի համար նախատեսված սենյակները տեսնելու համար մասնակիցը կարող է մոտենալ Խորենացի 3 հասցեում գտնվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենք: Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքի ընդունման օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր:(Կցված է d9648877.rar)						

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	**Ապրանքը ընդունեց**
_____	_____
ստորագրություն	**ստորագրություն**
_____	_____
ազգանուն, անուն	**ազգանուն, անուն**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 4.1
____/_____/2021թ. կնքված
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/022 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «ՀՀ պետական եկամուտների կոմիտե» -ի (այսուհետ՝ Գնորդ) և ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻՉ ԳՐՈՒՊ (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ._____ -ին կնքված N ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/022-1 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
արխիվի դարակաշարեր	հատ	
արխիվի դարակաշարեր	հատ	
արխիվի դարակաշարեր	հատ	
արխիվի դարակաշարեր	հատ	
արխիվի դարակաշարեր	հատ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն